

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԵՐԿԱՆՅԱՆ ԱՆՆԱ ԵՐԵՄԻ**

**ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Ժ. 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2022**

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գիտական խորհրդում:**

**Գիտական ղեկավար՝**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
**Դոլուխանյան Աելիտա Գուրգենի**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր  
**Դեմիրճյան Պետրոս Հակոբի**

բանասիրական գիտությունների թեկնածու  
**Ավանեսյան Արմեն Ավանեսի**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

**Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հուլիսի 15-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:**

**Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:**

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
բանասիրական գիտությունների թեկնածու՝



**Ս. Ա. Մարգարյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի երկրորդ կեսի գրող-հրապարակախոս Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունների ընդհանուր վերլուծությանը: Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունները՝ «Սրբացած հուշարձան» (1975), «Վիրավոր կոունկ» (1977), «Ճակատագրի ճանապարհներ» (1978) ակնարկաշարը, «Մաքառում» (1980), «Տրդատ ճարտարապետ» (1983), «Երկրագունդը կյոր է» (1985), «Գոյամարտ» (1986), «Հարգանք» (1987) (հրապարակախոսական հոդվածների ժողովածու), «Մանկության տունը» (1989), «Հայոց մեծերը» (2012) և այլն, գրված են ժամանակի հասարակական հարցադրումներին համահունչ, արձարծում են այժմեական խնդիրներ, սակայն գլխավոր անկյունաքարը հայոց միջնադարի խորունկ և խորհրդավոր աշխարհն է, որը Գ. Դևրիկյանի համար դառնում է ինքնաարտահայտման յուրօրինակ ձև: Նրա գրեթե բոլոր և՛ գեղարվեստական ստեղծագործությունները, և՛ հրապարակախոսական հոդվածները, և՛ գիտահանրամատչելի աշխատությունները ներծծված են հայրենասիրությամբ և քարոզում են սիրելի հայրենիքը անձից առավել, դառնալ օրինակելի քաղաքացի, պահել ազգայինն ու մայրենին, ինչպես նաև գնահատել հոգևորն ու մշակութային արժեքները:

## ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գևորգ Դևրիկյանի գրական ժառանգության ամբողջական քննությանն է նվիրված սույն ատենախոսությունը, որի գլխավոր նպատակն է եղել ներկայացնել վերջինիս՝ որպես հետազոտող և ստեղծագործող: Գ. Դևրիկյանին որպես ստեղծագործող ներկայացնելը օգնում է վերհանելու նրա ստեղծագործական անցած ճանապարհն ու մեթոդը, գրական երկի կերպարակերտման ու պատկերակերտման միջոցները: Թեկնածուական սույն ատենախոսության նպատակն է եղել ընդհանուր համապատկերի մեջ ներկայացնել Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունը, բացահայտել արձակի առանձնահատկությունները, ցույց տալ վերջինիս ստեղծագործությունների գիտագեղարվեստական փոխկապվածությունը և փոխյրացումը: Պատմավեպերի ընդունված վերլուծությունից և պատմական միջավայրը վերհանելուց բացի, անդրադարձել ենք նաև Գ. Դևրիկյանի օգտագործած պատմական սկզբնաղբյուրներին և դրանց վերլուծությանը: Մեր առջև խնդիր ենք դրել ցույց տալ՝ պատմիչների գործերի համապատասխան հատվածներն ինչպես են մեկնաբանվել, գեղարվեստորեն արտահայտվել և տվյալ դարաշրջանի ընդհանուր պատկերի արտացոլման հիմքը դարձել Գ. Դևրիկյանի ստեղծագործություններում:

## **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Գ. Դերիկյանի ստեղծագործությունները՝ նվիրված են հայոց պատմությանն ու հայ մշակույթի նշանավոր գործիչներին, հայ բանահյուսությանն ու միջնադարյան գրականությանը և արժարժում են արդիական հնչեղություն ունեցող խնդիրներ և տարաբնույթ հարցեր: Հայրենասիրությամբ է ներծծված նրա ստեղծագործության ամեն դրվագ, իսկ թեմատիկան արդիականությունն է՝ անցյալի և ներկայի հետ տարված զուգահեռով և մերօրյա կյանքի մտահոգություններով: Գևորգ Դերիկյանի պատմավեպերը ևս ունեն արդիական հնչեղություն և անմիջական արձագանքն էին 1980-90-ական թվականներին հայ ժողովրդի առջև ծառայած խնդիրների: Արցախյան շարժման նախօրյակին գրված «Գոյամարտը» պեռք է ոգեշնչել հայ ժողովրդին և առաջ մղել՝ ի կատար ածելու մի նոր գոյամարտ ևս:

Տպագրվելու դեպքում այն պիտանի կլինի հայ դպրոցի ուսուցիչներին, մագիստրատուրայի ուսանողներին, ինչպես նաև որպես ընտրովի դասընթաց կարող է դրվել ոչ միայն բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայում, այլև պատմության:

## **ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Գևորգ Դերիկյանի գրական ժառանգության և հասարակական գործունեության մասին թեև տասնյակ հոդվածներ են գրվել, որոնք ցրված են ժամանակի մամուլում, ինչպես նաև գրաքննադատների հոդվածների ժողովածուներում, սակայն նրա ստեղծագործություններն ամբողջականորեն քննող գիտատեսական աշխատանք դեռևս չկա: Գ. Դերիկյանի ստեղծագործությունները գնահատել են մի շարք գրականագետներ և արվեստագետներ՝ Լ. Սարգսյանը, Վ. Գաբրիելյանը, Յու. Հովհաննիսյանը, Կ. Մելիքսեթյանը, Լ. Մուֆաֆյանը, Ս. Մուրադյանը, Մ. Մելքոնյանը, Գ. Ջանիկյանը, Հ. Խաչատրյանը և այլք: Առավել հանգամանալից Գ. Դերիկյանի ստեղծագործություններին անդրադարձել է Ս. Արզումանյանն իր «Խորհրդահայ վեպը» ուսումնասիրության մեջ:

«Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը» ատենախոսությունը լրացնելու է հայ գրականագիտության մեջ Գևորգ Դերիկյանի ստեղծագործության քննական-ամբողջական վերլուծության բացը: Վերջինիս ստեղծագործությունների հանգամանալից ուսումնասիրությունը պայմանավորում է ատենախոսության գիտական նորույթը:

---

<sup>1</sup> «**Խաչապաշտ հող**» 1700» խորագրով ակնարկաշարը, նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, մնացել է անավարտ: Հոգևոր-մշակութային կենտրոններին՝ Սուրբ Էջմիածին, Զվարթնոցի, Դաղիվանքին և այլ սրբավայրերին նվիրված հոդվածաշարի մի մասը հրատարակվեց Լուս Անշելեսի «**Երկինք**» գրական-մշակութային ամսագրում: Անտիպ է մնացել նաև «**Գլածոր**» պիեսը:

## ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը քննարկել և հրապարակային պաշտպանության են երաշխավորել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ու Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնները: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական պարբերականներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սույն ատենախոսությունը գրելիս մենք չենք դիմել գրողի երկերը ըստ ժամանակագրական ընթացքի ներկայացնելուն, որը միուցե կօգներ դիտարկելու նրա գրական վարպետության և աշխարհայացքի ու ըմբռնումների ճնավորման աստիճանական ընթացքը: Դրա փոխարեն, սակայն, կհանգեցնեք անհարկի կրկնությունների, ինչպես, օրինակ, Անիի թեմային տարբեր բաժիններում անդրադարձով, կամ գիտահանրամատչելի ստեղծագործություններից անցում կատարել դեպի պատմական թեմայով գրած վեպը, ապա հրապարակախոսությունը և այսպես շարունակ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ատենախոսության գլխաբաժանման հիմքում դրել ենք Գ. Դևրիկյանի ստեղծագործությունները ժանրային թեմատիկ բաժանմամբ ներկայացնելու սկզբունքը: Սույն ատենախոսությունը բաղկացած է **ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից**: Եզրակացության մեջ ի մի են բերվում կատարված ուսումնասիրության արդյունքներն ու եզրահանգումները: Վերջում տրվում է գրականության ցանկ, որն արտացոլում է օգտագործած տեսական գրականությունը և վերլուծած փաստական նյութի աղբյուրները: Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք **համակարգային, վերլուծական, համեմատական** մեթոդները:

Աշխատանքի ծավալը՝ 137 համակարգչային էջ:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության առարկան, հարցի պատմությունն ու մշակվածության աստիճանը, հիմնավորվում աշխատանքի կառուցվածքը, գիտական նորույթը, մեթոդական հիմքերը: Հիմնավորում ենք աշխատանքի կառուցվածքն ու վերլուծության մեթոդաբանությունը, ինչպես նաև նշում ենք աշխատանքի արդիականությունը և գիտական նորույթը: Սույն ատենախոսության մեջ չենք անդրադարձել Գ. Դևրիկյանի բոլոր ստեղծագործություններին, ուստի ներածության մեջ հակիրճ տրվում է վերջինիս ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը, գրողի անցած ստեղծագործական ուղին:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ԱՆԻԱԿԱՆԸ

Առաջին գլուխը խորագրել ենք «Գևորգ Դևրիկյանի անիականը»՝ վերլուծելով Անիին նվիրված «Տրդատ ճարտարապետ» և «Գոյամարտ» պատմավեպերը, թեև նրանց ժամանակագրորեն նախորդում է «Վիրավոր կոունկ» վեպը: Այսպես ենք վարվել, որպեսզի պահենք նաև ստեղծագործությունների թեմաների ժամանակային ընթացքը՝ նախ անդրադառնալ 10-11-րդ դարերին վերաբերող ստեղծագործություններին և հետո նոր 17-18-րդ դարերի ազատագրական ոգորումները ներկայացնող «Վիրավոր կոունկին»:

Գրողն իր ստեղծագործություններում մեծ տեղ է հատկացնում Անիին՝ Բագրատունյաց մայրաքաղաքին՝ պատկերելով վերելքի ընթացքից («Տրդատ ճարտարապետ») մինչև ողբերգական ավարտը («Գոյամարտ»), ինչպես նաև Բագրատունիների անկումից հետո անեցիների հետագա ճակատագրին («Վիրավոր կոունկ»):

Անիին նվիրված Գ. Դևրիկյանի երկու պատմավեպերի քննությանը զուգահեռ վերլուծել ենք նաև Անիի՝ նախորդ շրջանին նվիրված թե՛ հայ հեղինակների ստեղծագործությունները և թե՛ եվրոպական ուղեգրողների երկերի՝ Անիին վերաբերող հատվածները: Գ. Դևրիկյանը ևս արդիական է համարում Անիի՝ որպես Բագրատունյաց փառքի մարմնավորման գաղափարը՝ այն կապելով հայոց անկախ պետականություն ունենալու ձգտման հետ: Անին ազգային հզոր խորհրդանիշ է, որի ներքո թաքուն երազների ենթատեքստով թաքնված է Հայաստանն անկախ տեսնելու դևրիկյանական մեկնաբանությունը. «Անին միտք է, ոգի, վերածնության խորհուրդ, խորհրդանիշ ինքնության: Ինքնություն է Անին, Անին ապացույց է, թե ինչի է ունակ միտքը ժողովրդյան: Եվ Անին շատ ու շատ հետո էլ ոգի ու կորով է տալու ժողովրդին: Տալու է ոգի անընկճելի, ոգի դիմադրողական: Անին հայոց ոգին է իր վսեմ պարզությամբ ու չարի դեմ՝ ազնվությամբ»<sup>2</sup>:

### 1.1. «ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՊԱՏՄԱՎԵՊԸ (1983)

Այս ենթագլխում ուսումնասիրել ենք «Տրդատ ճարտարապետ» պատմավեպը, որի հիմքում ընկած են 10-րդ դարի միջնադարյան հայտնի ճարտարապետ Տրդատի՝ արարող ու կառուցող հայի կյանքն ու գործունեությունը, Բագրատունյաց և մասամբ Արծրունյաց հարստությունների գահակալության շրջանի իրադարձությունները (10-րդ դարի երկրորդ կես և 11-րդ դարի սկիզբ), Անի քաղաքի վերաշինությունն ու բարգավաճումը, պատմությունն ու կենցաղը: Գ. Դևրիկյանը վեպի գլխավոր հերոս է դարձրել միջնադարի հայտնի հայ ճարտարապետ Տրդատին՝ հասարակ շինականի որդուն: Տրդատի կյանքի ընթացքը և ստեղծագործական վարպետությունը կարծես զուգահեռ են ընթանում Անիի ծաղկմանը: Գ. Դևրիկյանը ներկայացնում է Տրդատի կերպարի բացահայտման նոր մոտեցումներ: «Տրդատ ճարտարապետը ոչ միայն գաղափարակիր հերոս է,

<sup>2</sup> Դևրիկյան Գ., Տրդատ ճարտարապետ, Եր., 1983, էջ 494:

այլև գաղափարներն իրականացնող հերոս: Վիպական սյուժեի զարգացման ընթացքում նա հետևողականորեն արտահայտում է իր մտքերը, որոնք դառնում են գործ»,- նշում է Մելիքսեթ Մելքոնյանը<sup>3</sup>:

Պատմավեպում սյուժետային զարգացման ընթացքի ծալքերում քննվում են նաև այն հարցերը, որոնք սկսեցին արձարծվել 18-19-րդ դարերի ազգային-եկեղեցական կյանքում և հայագիտական ուսումնասիրություններում: Գիտական բանավեճը, տարբեր կարծիքների քննարկումներն արտահայտվել են հերոսների երկխոսությունների միջոցով: Կապված ժողովրդական երգի ընդունելի կամ անընդունելի լինելու հետ՝ մի երկխոսություն է տարվում պատանի Տրդատի և վանահոր միջև, որի հիմքում ընկած է այն հարցադրումը, որ եթե մերժելի էր ժողովրդական երգը, ապա այն ինչո՞ւ իր մատյանում անմահացրեց Պատմահայրը: Ընդհանրապես անհրաժեշտ է նշել, որ վեպում շարունակ կենդանիորեն ներկա է Մովսես Խորենացին, որը գծեց մեր պատմության հետագա ընթացքի խորհուրդը: Տրդատի կյանքի տարբեր հանգրվաններում նրա մտածումները հարաբերվում են Պատմահոր «Մատյանի» տարբեր էջերի և հատկապես «Ողբի» հետ:

Ջուգահեռներ է անցկացվում Գ. Դերիկյանի «Տրդատ ճարտարապետ» վեպի գլխավոր հերոս Տրդատի ու Դ. Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց» պատմական վիպակի գլխավոր հերոս Զվարթի միջև: Եթե Զվարթի երգը ծաղիկների, գեղեցիկի մասին է, ապա Տրդատի երգը՝ սիրով արարելու և կառուցելու: Տրդատն էլ Զվարթի նման բախվում է վանականների հարուցած զրկանքներին և հալածանքներին: Կյանքի գեղեցկությունը չնկատող վանականներն արգելք են դնում աշխարհիկ երգերին՝ պարտադրելով երգել միայն կրոնականը:

Բնության պատկերների նկարագրությամբ հեղինակին հաջողվել է ցույց տալ մարդկային ստեղծագործության հաղթանակի արտահայտումը և բնության անկրկնելի ուժը: Մարդ-բնություն արարչագործությունը կողք կողքի են: Աղթամար կղզու բնության առեղծվածային և անզուգական պատկերները լրացվում են մարդ-հանճարի մտքի թռիչքով՝ Աղթամարի տաճարով: Մի կողմում բնությունն է. «Մայրամուտի արևը հրդեհել էր ծովը, և շուրջը լույս էր համատարած: Դիմացը Արտոս լեռան ձյուններն էին հրդեհվել: Իսկ շուրջը աշնան կանաչ գմրուխտն էր ափին և այգիների դեղինը...»<sup>4</sup>, մյուս կողմում՝ տաճարը. «Տրդատն այդպիսի պատկերագարդ տաճար դեռ չէր տեսել: Սրբատաշ որմերը ճարտարապետն օգտագործել էր առավելագույնս՝ աշխարհի արարչագործության օրից մինչև իր օրերն ու ապագան պատկերելու համար: Սա մի քարեղեն մատյան էր, որի ամեն մի պատկեր-էջը շատ բան էր հայտնում ու ուսուցանում դիտողին»<sup>5</sup>:

<sup>3</sup> Մելքոնյան Մ., Վեպ՝ Տրդատ ճարտարապետի մասին, «Սովետական Հայաստան», մայիսի 18, 1984, էջ 3:

<sup>4</sup> Դերիկյան Գ., Տրդատ ճարտարապետ, էջ 111-112:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 119:

## 1.2. ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ «ՏՐՂԱՏ ԾԱՐՏԱՐԱՊԵՏ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Այս ենթագլխում անդրադառնում ենք «Տրղատ ճարտարապետ» պատմավեպի ժամանակի գեղարվեստական պատկերմանը՝ փորձելով վեր հանել պատմավեպի ժամանակի մտածողությունը: Դաստիարակչական և ուսուցողական նպատակով խրատական գործերը բնորոշ էին միջնադարյան մտածողությանը, երբ յուրաքանչյուր դեպք, իրադարձություն, բարի գործ, խրատ գնահատվում էին բարոյական որոշակի մեկնաբանությամբ և եզրահանգմամբ: Գ. Դևրիկյանը նման հնարանքի դիմում է ոչ միայն «Տրղատ ճարտարապետ» պատմավեպում, այլև մյուս ստեղծագործություններում:

Գրողն ընթերցողին է ներկայացնում մանրամասն նկարագրություններ պատմական այս կամ այն փաստի վերաբերյալ, թագավորների գահակալության տարեթվեր, հուշարձանների, խաչքարերի, եկեղեցիների, միջնադարյան դպրանոցների մասին տեղեկություններ, այս ամենը կատարում է նպատակային ձևով՝ մեր երկրի անցյալի երբեմնի փառքը և հոգևոր ժառանգությունը պատկերելու համար: Գեղարվեստական նման կառուցվածքի և շարադրանքի ընտրությունը ստուգաբանվում է դիդակտիկ գրականության շրջանակում:

Տրղատ ճարտարապետի ուսումնառության ժամանակ ճարտարապետության արվեստն ասես սովորում է նաև ընթերցողը: Պատմավեպում Տրղատի ուսումնառությունը ներկայացնելը և գործընթացի մանրամասն ցուցադրումը հեղինակի կողմից կատարվում է գիտակցված ձևով: Կարելի է ասել, որ վեպի գեղարվեստական հյուսվածքում ընթերցողը ծանոթանում է նաև քրիստոնեական խորհրդաբանությանը:

Պատմագեղարվեստական հաջորդ կարևոր միջոցը միջնադարին բնորոշ սուրբգրային վկայակոչումներն են, որոնցով հավաստվում է ասվածը: Ընդ որում՝ աստվածաշնչային օրինակը պետք է համահունչ լիներ շարադրանքի տվյալ իրավիճակին և ոգուն: Անգամ ստեղծվել էր համապատասխանությունների մի շարք, թե համանման իրավիճակներից որում ինչ օրինակ պետք է բերվի: Փորձության ժամանակ ամենատարածվածը փորձության բաժակը հեռացնելու մասին խոսքերն էին, որոնք Հիսուս ասաց Գեթսեմանի աղոթքի ժամանակ: Նույն ձևով Տրղատն Անիից ստոր ամբաստանությամբ հեռանալիս է վկայակոչում Գեթսեմանի աղոթքի խոսքերը. «Հա՛յր իմ, եթե հնար է, անցցե՛ բաժակս այս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»<sup>6</sup>:

Գեղարվեստական շարադրանքով ներկայացվում են Վասպուրական աշխարհի վաճառաշահ և հռչակված քաղաքները՝ Արճեշը, Ոստանը, Կճավա վանքը, Աղթամար կղզու եկեղեցիներն ու հուշարձանները, Կոստանդնուպոլսի, Անիի Մայր տաճարի, արքայանիստ ապարանքների նկարագրությունները: Անդրադարձ է կատարվում նաև Գ. Դևրիկյանի պատմավեպերում պատկերված պատմության երկաստիճան դիտարկմանը, որը ևս կատարվում է ուսուցողական

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 220: Տե՛ս Մատթեոս 26, 39:

նպատակով: Այն պատկերվում է հետևյալ ձևով՝ 5-րդ դարի պատմիչների երկերի օրինակները բերելով Տրդատի համար՝ վերջինս տեսնում է, որ իր ժամանակներում դեռևս մնացել են նախորդ դարերից եկող տգիտությունն ու արծաթափրուությունը, ընչաքաղցությունն ու զրպարտանքը, անմիաբանությունն ու իշխելու տենչը: Ասվածը, դժբախտաբար, իր արդիականությունը չէր կորցրել նաև մեր օրերում՝ մտահոգելով Գ. Դերիկյանին արդեն իր իսկ ժամանակներում: Պատմության մեջ պատմության դիտարկումը բարձրացնում է պատմավեպի արդիական հնչեղությունը: Հեղինակը Թարգմանչաց Ոսկեդարի մտավոր սխրանքը ներկայացնում է 10-րդ դարի հերոսների երկխոսությունների և քննարկումների միջոցով և 20-րդ դարի տեսանկյունից իմաստավորում 5-րդ և 10-րդ դարերի հոգևոր բարձր արժեքները: Հեղինակը վեպի պատմական միջավայրը ստեղծում է շատ բնական՝ օգտագործելով միջին հայերենին բնորոշ բառեր և արտահայտչամիջոցներ, միաժամանակ տալով դրանց բացատրությունը, առած-ասացվածքներ, օրինանք-մաղթանքներ: Ուսուցողական նպատակով է կատարվում միջնադարյան հայրենիների տեղին օգտագործումը, որի նպատակն է գալիք սերունդներին փոխանցել անցյալի արժեքները:

Գևորգ Դերիկյանի «Տրդատ ճարտարապետ» պատմավեպը բացահայտում է հայ ժողովրդի արարող ու կառուցող ոգու կենսական հատկությունները, Տրդատ ճարտարապետի կերպարի միջոցով հեղինակը վերհանում է ստեղծագործ հայի հարատևության խորհուրդը:

### **1.3. ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ «ԳՈՅԱՄԱՐՏ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ**

Երրորդ ենթագլխում հայ ժողովրդի անցյալի փառքը ոգեկոչում և վերջինիս օրինակով ապագա անկախ լինելության գաղափարն է «Գոյամարտ» պատմավեպում այլաբանորեն արտահայտում Գևորգ Դերիկյանը: Վեպում լավագույնս արտահայտվել են հայ դասական պատմավեպի՝ 19-րդ դարից եկող ավանդները: Ինչպես արդեն նշեցինք, հեղինակի պատմավեպերի կենտրոնական թեման Անի մայրաքաղաքն է՝ իր տարբեր բեկումնային ժամանակահատվածներով: «Տրդատ ճարտարապետ» պատմավեպում Անիի ծաղկման և բարգավաճման շրջանն է, «Գոյամարտ» պատմավեպն արձարծում է հայ ժողովրդի լինելության խնդիրը: Ավելի վաղ շրջանում գրված «Վիրավոր կոունկ» վեպում տեսնում ենք Բագրատունյաց թագավորության անկումից հետո Անիի գաղթականների ճակատագիրը մոլորվառումի՞նական հայկական գաղթավայրերում: Ինչպես «Տրդատ ճարտարապետ» պատմավեպում, այնպես էլ «Գոյամարտում», Գ. Դերիկյանի գլխավոր հերոսները հանդես են գալիս անհատի ներաշխարհի վերհանմամբ: Այս անգամ հեղինակի խնդիրն անփորձ արքայի-պանդուխտ հայորդու-վրիժառու թագավորի կերպարի բացահայտումն է: Վեպի առաջին իսկ էջերից ականատես ենք լինում վերջինիս կերպարի ձևավորմանը: Անփորձ արքան ամեն գնով ցանկանում է համախմբել ուժերը և միաբանել երկիրը: Հետագա զարգացումներում ականատես ենք լինում գահը կորցրած, ծուղակն ընկած, վրիժառու Գագիկ արքայի հոգեկան ապրումներին: Հեղինակին հաջող-

վել է բացահայտել և աստիճանաբար զարգացնել Բագրատունյաց վերջին արքայի կերպարը, հոգևոր մաքառումներն ու ոգորումները՝ նրանից կամաց-կամաց ձևավորելով ազգային-ազատագրական պայքարի հերոս: Գահագուրկ արքայից մինչև վրեժխնդիր հայի հասունացումը ակամա դառնում է հեղինակի գլխավոր միտումը: Հայրենիքից հեռու՝ օտար հողի վրա, Գ. Դերիկյանի երեք վեպերի Տրդատ-Գագիկ-Արթին կերպարները ձեռք են բերում մի ընդհանրություն: Պայքարող, չերկնչող, ըմբոստ ոգով այս հերոսները ոչ մի կերպ չեն հարմարվում օտարության մեջ: Նրանք օտար երկրում հայտնվել են տարբեր պատճառներով: Գագիկ արքան պատանդ է, Տրդատը մեկնել է իր ցանկությամբ, իսկ Արթինը՝ պանդուխտ, օտարությունը չընդունող այս երեք հերոսներն էլ ունեն իրենց կյանքի պատմությունը՝ մի միասնական շղթայով կապվելով իրար: Տրդատն էլ է հայտնվում Կոստանդնուպոլսում, Գագիկն էլ, երկուսն էլ այստեղ լքված են Անի քաղաքի կարոտով. «Անիից հարկ է հեռանալ որոշ ժամանակ, զգալու համար, թե իրոք ինչ զարդ է Հայոց աշխարհին»<sup>7</sup>, - ասում է Գագիկ արքան:

Գագիկի երազների աշխարհը հարաբերվում է երկար տարիներ պետականություն չունեցող Հայաստանի հետ: ՄիՖը և իրականությունն անընդհատ ուղեկցում են վերջինիս: Անվերջ երազները հայոց անկախ պետականության վերականգնման հույսեր էին ներշնչում նրան: ՄիՖականին զուգահեռ դառը իրականությունն է՝ կործանված Բագրատունիների գահը, լքված և քանդված Անի մայրաքաղաքը: Կործանված Անի մայրաքաղաքի պատկերը հեղինակի համար դառնում է անցյալից դասեր քաղելու միջոց:

Գագիկ թագավորը խաբեությամբ տարվելով Բյուզանդիա, ընկալվում է որպես տարագիր և հեռվում բանտված ազատարար թագավոր, ով գալով ազատելու է հայոց աշխարհը: Այս կերպարը սկզբնավորվում է շղթայված Արտավազդով և հասնում մինչև Փոքր Միեր: Գագիկի կերպարի նման մեկնաբանումը ուղղակիորեն գտնում ենք նաև այս պատմավեպում: Պատմության երկաստիճան ներկայացման ժամանակ պատմավիպասանի առջև ծագում է դժվարին մի խնդիր. վեպի պատմական միջավայրում ներկայացվում է նախորդ դարերի պատմական որևէ իրադարձություն, որն էլ դառնում է պատմության ընկալումը պատմության մեջ: Ինչպես որ նա դիմում է անցյալի այնպիսի թեմաների և հերոսների, որոնք համահունչ են իր ապրած ժամանակին, այնպես էլ պատմության մեջ ավելի վաղ անցյալի այնպիսի դեպքեր պետք է ընտրվեին, որոնք իրենց հերթին համահունչ էին անցյալի տվյալ ժամանակահատվածին: Այս դեպքում վեպի տվյալ մասերը կրկնակիորեն են համահունչ դառնում գրողի ապրած ժամանակին և նրա ասելիքին: Այս տեսանկյունից բնորոշ են հատկապես Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» տարբեր դրվագների մեկնաբանությունները «Գոյամարտի» հերոսների երկխոսություններում:

Հայրենասեր գրողը կանխագուրմ էր սկսվելիք Արցախյան հերոսամարտը և ավելի քան երբևէ կոչ անում սթափվել և սթափեցնել. «Միշտ ու հանապազ հանճարամիտ այրերը զգուշացրել են իրենցից հետո եկողներին սպասվող

---

<sup>7</sup> Դերիկյան Գ., Տրդատ ճարտարապետ, էջ 508:

աղետների մասին, կանխատեսել ու մի զարմանալի ներքնատեսությամբ մարգարեացել են, և, ցավոք, հաջորդները միշտ էլ մի տեսակ անտարբերությամբ են վերաբերվել այս մարգարեություններին: Քանզի ամեն աշխարհ եկող նոր սերունդ խորհում է այսպես. ինքն առավել է խելացի նախորդներից: Եվ ահա այստեղ է վրիպանքը: Ահա թե ինչու ազգի մեծերն ու գլխավորները ոչ միայն պետք է քաջ գիտենան իմաստնոց ասածն ու մտքերը, այլև ընթանան այդ իմաստությամբ, իրենց ընթացքին կողմնորոշիչ դարձնեն դրանք»<sup>6</sup>, - հավաստում է հեղինակը:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻՆ ՆՎԻՐԱՎԱԾ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երկրորդ գլուխը նվիրել ենք հայոց պատմության անցումային շրջանին նվիրված ստեղծագործություններին՝ «**Վիրավոր կռունկ**» վեպին, որտեղ վիրավոր կռունկը խորհրդանշական ձևով պատկերում է հայրենի բնաշխարհից կտրված և օտար ափերում դեգերող հայ պանդուխտներին, և «**Սրբացած հուշարձան**» աշխատությանը: Պանդխտության թեման, գլխավոր հերոսի՝ երկրից երկիր անցնելը վեպին հաղորդում է նաև ուղեգրական բնույթ, որի միջոցով ներկայացվում է ժամանակի ողջ հայ իրականությունը և միջավայրը՝ բուն երկրից մինչև հայկական գաղթավայրերը: Համապատասխան մեկնաբանություններով բացահայտել ենք կռունկի խորհրդանշական կերպարի դերի կյանական մոտեցումներն ու ընկալումները, ինչպես նաև օտար ափերում դեգերումների մեջ գտնվող պանդուխտ հայի՝ Արթինի հավաքական կերպարը:

Երկրորդ գլխում անդրադարձել ենք նաև «**Սրբացած հուշարձան**» աշխատությանը՝ ներկայացնելով վերջինիս պատմագեղարվեստական արժեքը: Գրքում հետադարձ հայացք է նետվում ուշ միջնադարյան հայ-ռուսական գրական կապերին: Թե՛ այս և թե՛ նախորդ գլուխներում համեմատել ենք պատմական սկզբնաղբյուրները և դրանց գեղարվեստական վերապատկերումը, պատմական միջավայրի ստեղծումը ժամանակի ազգագրական, հավատալիքային և քանակապատկան ստեղծագործությունների վերարտադրությամբ:

### **2.1. ՊԱՆԴԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՃԱԿԱՏԱԳԻՐ «ՎԻՐԱՎՈՐ ԿՐՈՒՆԿ» ՎԵՊԸ**

Ատենախոսության այս ենթագլուխը նվիրված է «**Վիրավոր կռունկ**» (1977) վեպին: Վեպի գլխավոր թեման պանդխտությունն է, որն ունի ազգային, քաղաքական և սոցիալական հիմք, և ուղեկցել է հայ ժողովրդին դարեր շարունակ՝ դառնալով նրա մեծագույն ցավի վկայությունը, երզն ու անտունին: Հայ մարդը դարեր շարունակ հարկադրված է եղել թողնել հայրենի տունը՝ պանդխտելով օտար ափեր. «Անիծյալ պանդխտություն, ինչքան օջախներ է մարել: Չի լինում չգնալը: Ո՛չ հող կա, ո՛չ գործ: Չլինե՛ր մի կտոր հացը, որ արցունքով թրջելով

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 68:

պիտի ուտենք»,- գրում է Գ. Դերիկյանը<sup>9</sup>: Պանդխտության թեման հայ գրակա- նության մեջ մեծ տարածվածություն է ստանում ուշ միջնադարում՝ հայ ժողովրդի քաղաքական կյանքի ծանր ու մոայլ ժամանակներում: Հայ մտավորականները միշտ էլ մտահոգվել են ցավոք շարունակ արդիական մնացող այս խնդրով:

Ըստ Գ. Դերիկյանի՝ «վիրավոր կռունկը» խորհրդանշում է պանդուխտ հային՝ «երամից» (*ազգից*) կտրված, օտար ամայի ճամփեքին դեգերող: Աչքը ճանա- պարհին՝ նա սպասում է իր երամին՝ նրան միանալու և ետ չընկնելու ակնկա- լիքով: Վիրավոր կռունկը՝ որպես ընտանիքը, ապա և հայրենական տունը կորցրած Արթինը, կրկնակիորեն ողբերգական կերպար է: Ինչպես որ խորհրդանշական է վեպի վերնագիրը՝ «**Վիրավոր կռունկ**», որը մարմնավորում է օտարության ճանապարհներին դեգերող պանդուխտներին, այնպես էլ խորհրդանշական այդ պատկերը գեղարվեստական շրջանակ է դարձել վեպի համար, որով սկսվում և ավարտվում է այն: Ժողովրդից կտրված պանդուխտը երամից ետ մնացած կռունկն է: Պանդուխտին սպառնացող փորձությունները, երամին (*իր հայրենի ժողովրդին*) հասնելը և փորձություններին արժանապատիվ դիմագրավելը վեպի սկզբում արտահայտվել է բուն վեպին նախորդող հետևյալ տողերով. «Բարձր երկնքում թևում էր կռունկը: Չկար երամը, և մենակ էր: Ու դրա համար էլ շտապում էր: Ամպ էր վերևում ու կայծակի լախտն էր փայլկտում: Իսկ կռունկը թևում էր ու թևում: Ասես չէր զգում կաթիլների հարվածը թևերին ու կայծակի ճայթյունը չէր վախեցնում: Շափշափում էր անձրևը և դժվարացնում թռիչքը: Ապառաժներին փլվում էր որոտը և խոլ արձագանք գտնում ձորերում:

Կռունկը թևում էր անահ ու վստահ: Եվ հպարտ էր թռիչքը»<sup>10</sup>:

Վեպի սկզբի հատվածը, ըստ էության, մի բնաբան է, որը կանխում և հուշում է դեպքերի հետագա ընթացքը՝ որպես միայնակ ու վիրավոր կռունկ հանդես եկող գլխավոր հերոսի համար: Գործողությունները տեղի են ունենում 18-րդ դարում, երբ Օսմանյան տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հա- յաստանի գավառներում ապրող հայությունը կեղեքումների էր ենթարկվում: Ամենուր հալածանքներ, խոշտանգումներ և հարստահարումներ: Այս ամենը անտանելի վիճակ է ստեղծում՝ հայ ժողովրդին մղելով փրկության ուղիներ որո- նելու: Գլխավոր հերոսը թեև Արթինն է, սակայն հեռու և մոտիկ, ուրախ թե տխուր բոլոր գործողությունները և իրադարձությունները հարաբերվում են Ակնի՝ որպես հայրենական խորհրդանիշի հետ: Ակնի միջոցով հայրենիքն է, որ ուղղորդում է հերոսների գործողությունները և պանդխտության ճանապարհների ընթացքը:

Վեպի նման մտահղացումն էլ պայմանավորել է նրա կառուցվածքը և գլխա- բաժանումները: Հեղինակն այն կառուցել է դեպքերն իրար հաջորդելու սկզբունքով: Վեպը բաղկացած է դրվագներ անվանվող 30 գլխից, որոնցից յու-

<sup>9</sup> Դերիկյան Գ., Վիրավոր կռունկ, Եր., 1977, էջ 383-384:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 3:

րաքանչյուրն ունի իր բնաբանը՝ Ակնա անտունիներից<sup>11</sup> մեջբերված: Յուրաքանչյուր դրվագ նաև ունի իր բնաբանին համապատասխան առանձին սյուժեն: Բոլոր այս դրվագները հիմնականում պտտվում են գլխավոր հերոսի շուրջ: Միջնադարյան այս հայրենները գրողը նույնացնում է օտարացող հայրենիքի կարոտի հետ: Վեպի գեղարվեստական շրջանակը վերլուծվում և եզրափակվում է հետևյալ հատվածով. «Բարձր երկնքում թևում էր երամը: Կռունկները թևում են ու թևում: Հետո ընկնում է մեկը, ապա՝ մյուսը, ճամփաներին են մնում շատերը: Բայց կա երամը և կգա հաջորդ գարուն: Կգան կռունկներն ու կերթան, և մի օր լույս-արև կբացվի: Նրանց հետքից կգան և պանդուխտները: Կշենանա երկիրը, և գուցե մի օր հիշեն ճամփաներին մնացած, երկիր չհասած, երկրի կարոտը սրտում՝ հեռվում հանգած կռունկներին»<sup>12</sup>:

Ինչպես որ միայնակ վիրավոր կռունկի լինելությունն էր արտահայտվում երամով, այնպես էլ երամի և դեպի հայրենիք ընթացքի մեջ է իմաստավորվում պանդխտության ճամփաներին ընկած կռունկների կյանքը, որոնց մի մասն ունեցել է հայրենիք հասնելու և հայրենի երկրի շենացմանը մասնակցելու բախտը, ինչպես հեղինակի՝ գաղթի ճանապարհներով անցած Խաչատուր հայրը:

Արթինի ճանապարհորդությունն ուղեգրական ու նաև գիտաճանաչողական ուղղվածություն է հաղորդում վեպի հետագա ընթացքին, քանի որ հաջորդող դրվագներում գլխավոր հերոսն անցնելու էր հայ գաղթաշխարհի տարբեր կենտրոններով, ծանոթանալու էր մի շարք պանդուխտների հետ, մեծ փորձությունների գնով վերագտնելու էր հայրենիքը, ապա որպես վտարանդի՝ հեռանալու էր հայրենական տնից և լինելու էր հայոց աշխարհի սրբավայրերում, որոնք նաև ժամանակի ազատագրական պայքարի կենտրոններն էին: Գ.

Դևրիկյանը վեպը գրելուց առաջ հետազոտական մեծ աշխատանք է կատարել, ուսումնասիրել ժամանակի հայկական ուղեգրական և վաճառականական երթուղիները և վեպի գործողությունները ներկայացրել 17-րդ դարի Արևելյան Եվրոպայի հայկական ուղիների շրջանակում: Ուղեգրական վեպին բնորոշ ձևով մի դրվագն ավարտվում է ճանապարհորդական մի ընթացքով, և նորը սկսվում մի ուրիշով:

Հեղինակը ներկայացնում է հայկական այս գաղթօջախներում եղած տարբեր եկեղեցիներն ու վանատները, արձանագրություններն ու խաչքարերը, պատմում վաճառատների, արհեստների, կենցաղի և սովորույթների մասին: Հատկանշական է, որ քաղաքները ներկայացվում են՝ ըստ միջնադարյան հայկական անվանումների, և տողատակի ծանոթագրություններում տրվում են ռումինական ընդունված ձևերը: Ինչպես, օրինակ՝ Ուոմանի, Սաչով, Պոչան, Վարշով, Խուրթին, Իլով և այլն: Արթինի երթուղին հեղինակը պայմանավորում է ժամանակի հայ գաղթավայրերի առավել նշանակալից կենտրոնների իրարահաջորդ ըն-

<sup>11</sup> Նշենք, որ հեղինակը վեպում մեջբերած անտունիները, հայրեններն ու ժողովրդական տաղերը վերցրել է հետևյալ աղբյուրներից՝ Աբեղյան Մ., Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ, Եր., 1940: Մնացակառյան Աս., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Եր., 1956:

<sup>12</sup> Դևրիկյան Գ., Վիրավոր կռունկ, էջ 595:

թացքով: Դեպի շարունակական դեգերումներ ընթացքը խորհրդանշական ձևով սկսվում է մուղղով հովվի հետ հանդիպմամբ: Արթինին հանդիպած հովիվը մարդկային դարավոր կենսափորձի կրողն է: Մուղղով հովիվը զուգահեռ է անցկացնում մարդկային և կենդանական աշխարհների միջև՝ ակնարկելով, որ կենդանիները երբեմն ավելի հավատարիմ ու նվիրված են լինում: Դեգերումների ճանապարհին կյանքի յուրաքանչյուր դրվագ մի այլ խորհուրդ է ստանում Արթինի համար: Արթինի ճանապարհորդությունը տարբեր քաղաքներ արկածա-յին դրվագներ են հիշեցնում: Անգամ ամեն մի դրվագում հանդիպած պանդուխտ կամ հերոս իր հետքն է թողնում վերջինիս կյանքում: Անցնելով քաղաքից քաղաք՝ Արթինն ընթերցողին է ծանոթացնում հայկական գաղթօջախների կյանքն ու կենցաղը, սովորույթներն ու հավատալիքները:

## 2.2. ՊԱՆԴՈՒԽՏ ԱՐԹԻՆԸ՝ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՋԻՉ

«Վիրավոր կռունկ» վեպի գաղափարական հիմքում ընկած է ստեղծված իրավիճակում «ելքի» որոնման խնդիրը, որն իր ուսերին է վերցնում օտար ավերում անվերջ թափառումների և դեգերումների մեջ գտնվող գլխավոր հերոս Արթինը: Պղնձագործ Արթինից մինչև տպագրիչ ու գիրք ընդօրինակող, զինագործից մինչև ազգային-ազատագրական գործիչ դարձած Արթինի կերպարը, ինչպես Գ. Դևրիկյանի մյուս գլխավոր հերոսները, զարգանում է աստիճանաբար: Լինելով պանդուխտ՝ Արթինը յուրօրինակ քարոզչի կերպար է՝ անընկճելի ոգով ու մաքառման կամքով, հայրենի երկրում ապրելու և հաստատվելու իրավունքով: Թեև հեռու է հայրենիքից, բայց հոգով ու սրտով նրա հետ է՝ մտահոգված նրա ապագայով: Նա հասարակ պանդուխտ չէ, որը գնացել է գումար վաստակելու: Արթինը խտացնում է պանդուխտ հայի կերպարը. նա չի վհատվում, հայրենիքից հեռու պայքարում է օտար ավերում և իր «Տաղարանում» գրի առնում հիանալի հայրեններն ու անտունիները: Վեպում Գ. Դևրիկյանի գլխավոր խնդիրներից է պանդուխտների հոգեբանության բացահայտումը, որին նա հասնում է գլխավոր հերոսի հոգևոր ներաշխարհի վերհանման միջոցով: Երազանքի և իրականության հակադրությունը շարունակաբար ուղեկցվում է վեպում՝ ստեղծելով ժամանակի և տարածության հարաբերություն: Հայրենիքի հետ կապված հիշողություններ, հարազատների կարոտ, տունդարձի սպասումներ: Երազների աշխարհն Արթինին տանում է հեռվում թողած երկիր, և նա լսում է Եփրատի աղմուկը, ծաղկած նշենիների օրորը, պղնձացած ժայռերի ու զարնանը տուն դարձող կռունկների ծայնը, տեսնում պանդուխտ հորն անվերջ սպասող մոր արագ պտտվող իլիկը, Ակնածորի դատարկ ճանապարհը, որն այնքան կարևոր էր պանդուխտ ունեցողի համար: Այս ենթագլխում հեղինակը նկարագրում է պանդուխտ Արթինի անվերջ թափառումներն օտար քաղաքներում: Անվերջ է պանդուխտի ճամփան, քայլում է նա անդով ճանապարհով, մե՛րթ այս քաղաքում է հայտնվում, մե՛րթ այն, չի երևում կորույսյալ ու քարքարոտ ճանապարհի վերջը: Մի վիրավոր կռունկ է Արթինը, այսինքն՝ բոլոր «ղարիբները», քանի որ կռունկները վերադառնում են շենացնելու իրենց բույնը, իսկ նրանք այդպես էլ դեգերում են օտար ավերում: Շատերը վախենում են մեռնել

օտար հողում և շտապում են տուն գնալ: Գողերն ու գրպանահատները հանգիստ չեն տալիս պանդուխտներին՝ անվերջ կողոպտելով աղքատ մարդկանց: Ամենուր կողոպուտ, հարձակում ու տեղահանություն, անիշխանություն ու հոգնատանջ մարդիկ:

Լինելով վեպի միակ և կենտրոնական գլխավոր հերոս՝ Արթինն իր շուրջն է համախմբում մնացած ոչ գլխավոր հերոսներին, որոնք կամ նրա մտերիմ ընկերներն էին, կամ էլ պանդխտության ճանապարհին հանդիպած հոգացավ մարդիկ: Նրանք մեծ սրտացավությամբ և հոգածությամբ օգնում և կարեկից են լինում վերջինիս:

Վեպի հեղինակը հմտորեն օգտագործել է մեծաթիվ բանախոսական հյուսվածքները, որոնք հայ ժողովրդի ճակատագրի պատմական ճշմարտության խտացումն են: Ինչպես նկատել է **Դմ. Լիխաչովը**, «ժողովրդական քնարերգության թեմաները ծայրահեղ ընդհանրացված են: Դրանք նվիրված են հասարակության ամբողջական շերտի»<sup>13</sup>: Վեպում Գ. Դևրիկյանն ընթերցողին ականատես է դարձնում, թե ինչպես են ստեղծվում և ինչ միջավայրում են ձևավորվում միջնադարյան հայրեններն ու անտունիները: Սպասման, կարոտի և հույսի այս չքնաղ տաղերը հավաստում են իրական բանաստեղծության մասին, շրջում պանդուխտների հետ ամենուր՝ դառնալով նրանց հոգու և սրտի մի մասնիկը:

Իրապես, պանդխտության այդ երգերը՝ անտունիները, կաֆաները, հայրենները, ժողովրդական տաղերն ու խաղերը, դասական ու աջուղական նմուշները, որոնք միաձուլվել են վեպի շարադրանքին, պատկերում են հայ ժողովրդի ապրած ծանր ու դժվարին պայմանները, սոցիալ-քաղաքական կյանքը, կարոտի տարրալուծումն ու հայրենիք վերադառնալու անվերջ սպասումները:

### 2.3. **ՍՐԲԱՑԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

Այս ենթագլխում քննության է առնված «Սրբացած հուշարձան» վավերապատումի հյուսվածքով գրված աշխատությունը, որը ստեղծագործական մի նոր գիծ է ավելացնում Գևորգ Դևրիկյանի գրական ինքնատիպ ձեռագրին: Աշխատության մեջ պատկերված է 17-19-րդ դարերում հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար խիստ կարևոր մի ժամանակաշրջան, որն իր լրումին է հասնում ռուս-պարսկական պատերազմով, Ղարաքիլիսայի պաշտպանության համար մղված մարտերով, Երևանի բերդի գրավմամբ, Էջմիածնի և Օշականի ճակատամարտերով:

Հեղինակը նկարագրում է հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության գինակցության դրսևորումը: Մինչև 19-րդ դարասկզբի ռուս-պարսկական պատերազմների և հայ կամավորականների մասնակցության մասին գրելը, գրքի սկզբում Գ.Դևրիկյանը նկարագրում է Հայաստանի ու հատկապես Արևելյան Հայաստանի վիճակը 17-18-րդ դարերում: Գրքում հետադարձ հայացք

<sup>13</sup> **Лихачев Д.**, Поэтика древнерусской литературы, М., 1979, с.220.

է նետվում միջնադարյան հայ-ռուսական գրական կապերին: Այս ամենը օղակ առ օղակ ամրացնում է այն շղթան, որը գալիս և կապվում է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միավորման գործում հայ աշխարհագրայինների և ընդհանրապես ժողովրդի մասնակցությանը ցույց տալով, որ այն տևական ընթացք է ունեցել: Պատմության և հեղինակի ժամանակաշրջանի կյանքի պատկերներն աշխատությունը դարձնում են շատ հետաքրքիր. հնի (պատմության) և նորի (ժամանակակից կյանքի պատկերների) համադրումը դառնում է աշխատության գլխավոր գեղարվեստական արժեքը:

«Սրբացած հուշարձանը», լինելով ավելի փաստագրական, միևնույն ժամանակ կառուցված է գեղարվեստական ստեղծագործությանը բնորոշ ժամանակային տարբեր չափումների վրա: 19-րդ դարից իջնում է 16-րդ դար, կամ ելնում մինչև 20-րդ դարասկիզբ, մինչև Սարդարապատ ու Հայրենական մեծ պատերազմ: Նման անցումների նպատակն է ընդգծել, որ հայ զինվորության ընթացքը շարունակվել է դարերի հոլովույթում:

Մի քանի դարերի՝ նման պայքարի խտացումն է դարձել Օշականի ճակատամարտի ժամանակ զոհված զինվորների հիշատակին կանգնեցված հուշարձանը, որի բնորոշմամբ սկսվում և ավարտվում է հիշյալ ստեղծագործությունը. «Կոթողների մեջ ամփոփված են դարերի իմաստնությունը, ժողովրդի երազանքներն ու աներեր հավատը: Հուշարձանները քարեղեն հիշողություն են: Քանզի քարի մեջ ժողովուրդը մարմնավորել է և՛ ցավը, և՛ ուրախությունը: Քարին ի պահ է տվել նաև իր պատմությունը: Եվ քարը պահել է ժողովրդական հիշողությունը»<sup>14</sup>, - հավաստում է հեղինակը:

Աշխատությունում մեծ տեղ է հատկացված 1827թ. օգոստոսի 17-ի Օշականի ճակատամարտին, որը շատ կարևոր դեր կատարեց Արևելյան Հայաստանի ազատագրման համար: Գ. Դևրիկյանը մի կողմից ներկայացնում է պատմական իրադարձություններն ու փաստերը, պատմական անձնավորությունների մասնակցությունը մարտական գործողություններին և վերջիններիս ընթացքը՝ ըստ ժամանակի ռազմատեղագրական քարտեզների, և մյուս կողմից շնչավորում պատմությունը, հերոսների ապրումները մարտական գործողությունների պահերին: Հիշյալ գործն արժևորվում է նաև մարտական գործողությունների նկարագրության և զինվորական հոգեբանության տեսանկյունից ևս:

Պատմականության կարևոր պայմաններից մեկն է բնության նկարագրությունների պատմականացումը, պատմական միջավայրի փոխանցումը բնությանը: Բնության և ռազմերթի զուգակցմանը Գևորգ Դևրիկյանին հաջողվել է հասնել նման միջավայրի ստեղծմամբ՝ ռուս զինվորների համազգեստի և հայ աշխարհագրայինների հանդերձանքի, ինչպես նաև ժամանակի ռուսական հրետանու սվինավոր երկարափող հրացանների պատկերմամբ: Նման պատմականությամբ է պատվել ռուսական բանակի ռազմերթի ընթացքը Փամբակից մինչև Աշտարակ ձգվող ճանապարհին:

<sup>14</sup> Դևրիկյան Գ., Սրբացած հուշարձան, Եր., 1975, էջ 3:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ

Երրորդ գլուխը վերնագրված է «Գևորգ Դևրիկյանի փոքր արձակը», որտեղ քննության ենք առել Գ. Դևրիկյանի փոքր կտավի գործերը՝ պատմվածքները: «Պատմական թեմաներով գրված պատմվածքները» ենթազվում վերլուծել ենք միջնադարյան վկայությունների հիման վրա գրված մի շարք պատմվածքներ, ինչպես նաև անդրադարձել ենք արդի խնդիրներ արծարծող պատմվածքներին: Վկայաբանական, միջնադարյան հին ու նոր շրջանների սուրբգրային պատմությունները ևս դարձել են Գ. Դևրիկյանի պատմվածքների նյութ: Դրանցից մեկը նվիրված է Եդեսիայի հայ թագավոր Աբգարի և Հիտուս Քրիստոսի նամակագրությանը: Երրորդ գլխում ցույց է տրվում այն ընդհանրությունը, որը կա Դ. Դեմիրճյանի, Վ. Խեչումյանի և Գ. Դևրիկյանի պատմական թեմաներով գրված պատմվածքներում: «Միջնադարյան գրիչ ծաղկողները Գևորգ Դևրիկյանի ստեղծագործություններում» ենթազվում փորձել ենք ներկայացնել գրիչ-ծաղկողների գեղարվեստական կերպավորումը ինչպես պատմվածքներում, այնպես էլ պատմավեպերում և հրապարակախոսական երկերում:

### 3.1. ՊԱՏՄԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԳՐՎԱԾ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ

Այս ենթագլուխը նվիրված է Գ. Դևրիկյանի փոքր արձակին՝ պատմական թեմաներով գրված պատմվածքներին: Փոքր արձակի զարգացման գործում անժխտելի էր Դ. Դեմիրճյանի, Ս. Խանզադյանի, Վ. Խեչումյանի, Խ. Գյուլնազարյանի, Մ. Սարգսյանի, Ս. Այվազյանի, Ռաֆայել և Վալտեր Արամյան եղբայրների դերը: 1970-1980-ականների պատմվածքների ժողովածուները աչքի են ընկնում թեմատիկ բազմազանությամբ, ժանրի հնարավորությունների ընդլայնմամբ, ազգային մտածողության և հոգեբանության պատկերմամբ:

«Պատմվածքի ճակատագիրը դասավորվեց այնպես, որ այն ժամանակի ու տարածության համեմատաբար փոքր հատվածում պետք է խոսեր կյանքի ու աշխարհի համեմատաբար մեծ երևույթների մասին, դառնալով մարդկության գեղարվեստական հնարավորությունների ամենագեղեցիկ դրսևորումներից մեկը»<sup>15</sup>, - նշում է Ն.Ադայանը: Գևորգ Դևրիկյանի փոքր կտավի գործերը պատմվածքներն են, որոնք կարող ենք բաժանել 3 խմբի՝ պատմական թեմաներով գրված, արդիական խնդիրներ արծարծող և մանկության պատառիկներ: Պատմական թեմաներով գրված պատմվածքների հերոսները հայրենի մշակույթի նվիրյալներն են: Այս կերպարները ջանասիրաբար տքնում են հանուն հայկական մշակույթի, հոգևոր արժեքների և կառուցողական արվեստի հարատևության, նրանք գրի հավերժությունն ու հարատևությունը կարևորող ու պահպանող մարդիկ են:

Պատմական թեմաներով գրված պատմվածքների համար Գ. Դևրիկյանը բնաբան է ընտրում միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններում տարածված «Ձեռս մաշի, դառնա ի Հող, Գիրս մնա հիշատակող» արտահայտություն:

<sup>15</sup> Ադայան Ն., Սովետահայ պատմվածքը, Եր., 1968, էջ 230:

նը: Այն նաև Դ. Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց» պատմական վիպակի բնաբանն է: Գ.Դևրիկյանը պատմվածքների նյութ է դարձրել հիշատակությունները, միջնադարյան հին ձեռագրերը, եկեղեցիների ու տապանաքարերի արձանագրությունները: Այս առումով աղերսակցական կապերն ակնառու են **Վիզեն Խեչումյանի «Ձվարթնոց»** պատմվածքների ժողովածուի հետ: Վերջինս իր պատմվածքների համար ևս նյութ է քաղում միջնադարյան վկայություններից, ձեռագիր հիշատակարաններում պահպանված հակիրճ տվյալների հիման վրա Վ. Խեչումյանը կառուցում է ողջ պատումը: Նրա պատմվածքների հերոսներն էլ քարգործներ են, գրիչներ, տպագրիչներ, կառուցող վարպետներ, ոսկերիչներ, մագաղաթ ողորկողներ և մշակույթի նշանավոր գործիչներ:

«**Մաքառում**» ժողովածուի մեջ զետեղված պատմվածքները հավաստում են հայոց մշակույթի հարատևությունը և դարեր շարունակ գիր ու գրականությամբ ապրելու և արարելու հարաշարժությունը: Այստեղ գրողն ակնհայտ խաչաձևում է արվեստ-մարդ հարաբերությունը և պատկերում նրա ապրեցնող և վեհացնող ուժը: Հավելենք նաև, որ այս ժողովածուի մյուս ենթագլուխներում զետեղված պատմվածքներն էլ փոքրիկ երգիծական պատկերներ են՝ վերցված առօրյա կյանքից, որոնք ներկայացնում են ժամանակակից կյանքի խնդիրները:

Գևորգ Դևրիկյանը լեզվական և պատկերային ոճավորմամբ մոտենում է չափաձոյի ստեղծագործական լեզվին, ինչպես Վ. Խեչումյանն է հիշատակարանների տողերի հիման վրա գրում, այնպես էլ այստեղ ասես երգն է պատմվածքայնանում: Գևորգ Դևրիկյանի պատմվածքների գրեթե բոլոր հերոսները հայ ժողովրդի ոգու, հայրենի մշակույթի, ինչպես նաև մայրենի լեզվի հարատևությունը ընդգծող կերպարներ են:

Ինչպես Գ. Դևրիկյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում, այնպես էլ պատմական թեմաներով գրված պատմվածքներում միջնադարյան աշխարհը պատկերվում է ողջ շքեղությամբ ու կենդանությամբ, արարման ոգով ու ստեղծագործ ուժով: Միաժամանակ գրողը հայ միջնադարյան քնարերգությունը կապում է այն ժամանակների կյանքի հետ, որում ստեղծվել են այդ բանաստեղծական գոհարները՝ հավաստելով ճշմարիտ բանաստեղծության կենսական հիմքի առկայությունը: Գ. Դևրիկյանի Անիին նվիրված երկու պատմավեպերը համեմատելով միջնադարյան թեմաներով պատմվածքների և միջնադարից դեպի նոր շրջան անցում կատարող «Վիրավոր կոունկ» վեպի, ինչպես նաև խորհրդային տասնամյակներին վերաբերող պատմվածքների հետ, տեսնում ենք գրական բարձր վարպետության արտահայտություն եղող հետևյալ իրողությունը: Ոչ միայն յուրաքանչյուր ժամանակաշրջանին բնորոշ բառերն են կիրառված, այլև այսօրվա գրական հայերենի շրջանակում Անիին նվիրված գործերում զգում ենք գրաբարյան շունչը համապատասխան դարձվածքներով ու բառաձևերով: Նույն կերպ ուշ միջնադարին վերաբերող ստեղծագործություններում այդ շրջանի ուրույն հայ բանաստեղծության շունչն է, ուր միջնադարյան չափաձոյին գումարվում է պատումին բառաձևերի և վերջածանցների միջոցով 17-18-րդ դարերի լեզվին բնորոշ արտահայտչաձևերով շարադրանքը: Ժամանա-

կակից պատմվածքներում գտնում ենք 1930-1980 թթ. երևանյան իրականությանը բնորոշ լեզուն՝ մերօրյա իրականությանը բնորոշ շարադրանքով: Այս ենթազվխում շեշտադրել ենք այն հանգամանքը, որ գրողի հակումը դեպի պատմությունը գալիս էր փոքր արձակից՝ պատմվածքներից:

### 3. 2. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԻՉ-ԾԱՂԿՈՂՆԵՐԸ Գ.ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այս ենթազվխում ուսումնասիրվում է գրիչ-ծաղկողների կերպարները Գ. Դևրիկյանի ստեղծագործություններում: Գևորգ Դևրիկյանն իր ստեղծագործություններում և՛ պատմավեպերում, և՛ պատմական պատմվածքներում, և՛ հրապարակախոսական հոդվածներում կարևորում է ազգային ոգուն հավատարիմ գրիչ-ծաղկողների կերպարները: Իր ստեղծագործությունների գլխավոր հերոսներ դարձնելով գրիչ-ծաղկողներին՝ Գ. Դևրիկյանը շարունակում էր այն ավանդույթը, որն սկսվել էր Դ. Դեմիրճյանից, ապա իր արտացոլումը գտել Վ. Խեչումյանի ստեղծագործություններում: Գ. Դևրիկյանը, ներկայացնելով միջնադարյան հոգևոր բարձր արժեքները, անցյալի արժեքների մեջ արդիական խնդիրներ է որոնում ցույց տալով, որ հայ ժողովուրդն իրեն բաժին ընկած դժվարությունները հաղթահարել է ոչ միայն հերոսամարտերով և զինված պայքարի միջոցով, այլև հոգևոր ուժի և արվեստի զորությամբ: Մաշտոցի սխրանքը շարունակելով բոլոր ծանր ժամանակներում:

Գ. Դևրիկյանն իր գրեթե բոլոր ստեղծագործություններում մշտապես պատկերում է գրիչ-ծաղկողներին, որոնք անասելի ծանր պայմաններում ապագա սերունդներին էին հասցնում մայրենի գրով մատյանները: Հրապարակախոսական հոդվածներից մեկում Գ. Դևրիկյանը գրում է. «Իմաստության ջահը փոխանցել գալիք սերունդներին. ահա այս վեհ նպատակն էր առաջնորդում մեր հայտնի և անանուն գրիչ-ծաղկողներին, որոնք հաճախ մեծ Վարպետի ասած «մի նշխարով, մի կում ջրով», հաճախ էլ մրսած ու քաղցած, դողդոջ մատներով ու աչքերի նվազած լույսով մատյաններն են օրինակել»<sup>16</sup>:

Հայտնի է, որ գրիչներն իրենց հոգու թրթիռը ներկայացրել են ձեռագրերի էջերի նկարազարդումներում: Այսպիսի մի վառ օրինակ է անվարժ գրիչ-պատանու սիրած աղջկա ծաղկած նկարը: Տրդատի համար ևս գրչության արվեստը անձնական ապրումի է վերածվում, երբ ձեռագրի լուսանցազարդի հրեշտակի փոխարեն սիրած աղջկան է պատկերում ականա: Անհրաժեշտ է հավելել, որ միջնադարյան գրիչ-ծաղկողների սրբազան գործն արդեն ավելի ուշ իր ուսերին է վերցնում Գ. Դևրիկյանի «Վիրավոր կռունկ» վեպի գլխավոր հերոսը՝ Արթինը, որն անվերջ դեգերումների ճանապարհին իր «Տաղարանում» գրի է առնում հայրեններ ու անտունիներ՝ սերունդներին փոխանցելու մտահոգությամբ: Խորհրդանշական է, որ Արթինի Տաղարանն ամբողջանում է նրա դեգերումների ընթացքում. երկրերկիր անցնելով՝ մի-մի տաղ է ավելացնում ձեռագրի էջերում,

<sup>16</sup> Դևրիկյան Գ., Հայոց մեծերը, Եր., 2012, էջ 319 :

որը խորհրդանշում է, որ միջնադարյան գրիչը պարզ ընդօրինակող չի եղել, և ձեռագրերի էջերում դրոշմվել են նաև նրա հույզերը, կյանքի հիշարժան դրվագները: Ուսից կախված մախաղում գտնվող «Տաղարանը» դարձել է ոչ միայն նրա կյանքի գիրքը, այլև կյանքի իմաստը: Հայ գաղթօջախներում ժամանակի մշակութային կյանքի արտացոլումը պատկերվում է գրատպությամբ և ձեռագիր գրելով: Հայկական գաղթօջախների մեծ մասում հայերը շարունակում են պահել իրենց լեզուն և հավատը: 18-րդ դարի երկրորդ կեսին պոլսահայ միջավայրում երկրորդ վերածնունդն է ապրում գրչության արվեստը հայկական տպագրության սկսված վերելքի պայմաններում: Այս հանգամանքը դարձյալ գեղարվեստական ընդհանրացվածությամբ ներկայացրել է Գ. Դևրիկյանը Արթինի շարունակաբար գրվող Տաղարանին զուգահեռ պատկերելով հայ գրքի տպագրության ընթացքը: Այն միտքն է ընդգծվում, որ գեղարվեստական գործերում և հատկապես այն հատվածներում, որտեղ ներկայացվում են հերոսների ոգորումները, ճարտարապետական հղացքը, մանրանկարչական արվեստն ու ձեռագիր ընդօրինակումը, երևում է գրողի կատարած մեծ աշխատանքը, գիտական հետազոտություններին ու պատմական սկզբնաղբյուրներին նրա քաջամանդալությունը:

Իր գրեթե բոլոր ստեղծագործություններում պատկերելով միջնադարյան գրիչ-ծաղկողներին՝ Գ. Դևրիկյանը նշում է, թե ինչ պայմաններում են ընդօրինակվել ու ստեղծվել միջնադարյան մագաղաթե գիրքը, տաղն ու անտունին: Միջնադարյան գրիչ-ծաղկողների մասին այս ստեղծագործություններն ասես գրական-գեղարվեստական պատասխանը լինեն այն հարցի, թե մեր ժողովուրդը նման դժվարին պայմաններում ինչո՞ւ է այդքան մեծ թվով ձեռագրեր ընդօրինակել:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **Ուսումնասիրելով Գ. Դևրիկյանի ստեղծագործությունները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.**

1. Գ. Դևրիկյանի ստեղծագործության հիմքը դիդակտիկ արձակն է. դիդակտիկ-ուսուցողական գրականությամբ հեղինակը ընթերցողին մղում է սիրել հայրենիքը, ճանաչել ու իմաստավորել անցյալի հոգևոր արժեքները և վառ պահել մայրենին: Հայրենասիրական գաղափարները կազմում են նրա ստեղծագործության առանցքը: Գ. Դևրիկյանը նորովի է իմաստավորում պատմական անցուդարձը, տեղեկություններ տալիս միջնադարյան բնակավայրերի, վանքերի, խաչքարերի ու տապանագրերի մասին՝ ստեղծագործության նյութ դարձնելով հայ ժողովրդի անցյալի ամենատարբեր էջերը:

2. Գ. Դևրիկյանը շարունակում է պատմավիպասանության և ընդհանրապես պատմական թեմաներով ստեղծագործությունների այն ավանդույթները, որոնք սկսվել էին Րաֆֆուց և հասել Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Վ. Խեչումյան, Ս. Խանզադյան, Պ. Զեյթունցյան, Ա. Մարտիրոսյան, Վ. Գրիգորյան և ուրիշներ:

Հեղինակը կանխագգում էր սկսվող Արցախյան հերոսամարտը և իր վեպերով զգաստացման կոչ հղում սերունդներին: Պատմավեպերի համար նյութ ընտրելով Բագրատունիների մայրաքաղաք Անին՝ հեղինակը փորձում է նորովի վերամեկնաբանել հայոց անկախ պետականության կարևորության անհրաժեշտությունը:

3. Գ. Դևրիկյանն իր ստեղծագործություններում կարևորում է հայկական ձեռագրերի տարբեր էջերում, լուսանցքներում և հիշատակարաններում տեղ գտած արժեքավոր վկայությունները, ձեռագրերի գրչության հետ կապված տարբեր դրվագները՝ դրանք իր ստեղծագործական երևակայությամբ ու նորովի մեկնաբանությամբ դարձնելով գեղարվեստական ստեղծագործության նյութ:

4. Երեք վեպերին էլ բնորոշ է ուղեգրական բնույթը: Գլխավոր հերոսը, վայրից վայր անցնելով, ներկայացնում է հայոց աշխարհը, ինչպես նաև ճանաչողական մեծ նշանակություն ունեցող բյուզանդական հայտնի կոթողներն ու վանական կենտրոնները: «Վիրավոր կռունկում» գեղարվեստական ուղեգրությունն արդեն հիշեցնում է Րաֆֆու «Կայծերի» կառուցվածքը: Արթինը դառնում է այն առանցքը, որի շուրջն էջ առ էջ ներկայացվում են հայ գաղթավայրերը և դեպի երկիր տանող ճանապարհը:

5. «Վիրավոր կռունկ» վեպի գործողությունները յուրօրինակ ձևով զուգահեռ են ընթանում «Կռունկ» երգին, և գլխավոր հերոսը, կարծես, բաժանում է երգի կռունկի ճակատագիրը: Հայ ժողովրդական երգը և ուշ միջնադարյան բանաստեղծությունը դարձել են յուրօրինակ գրական կերպարներ և վեպերի ընթացքը առաջ մղող միջոցներ: Չափաձոն թելադրում է գործողությունների զարգացման ընթացքը: Ընթերցողը կանխագգում է, թե ինչ է լինելու:

6. Գևորգ Դևրիկյանին հաջողվել է վարպետորեն կիրառել երկաստիճան պատմականության սկզբունքը: Պատմության երկաստիճան ներկայացման ժամանակ պատմավեպի պատմական միջավայրում ներկայացվում է նախորդ դարերի պատմական որևէ իրադարձություն, որն էլ դառնում է պատմության ընկալումը պատմության մեջ:

7. Փոքր կտավի գործերում՝ պատմվածքներում, Գ. Դևրիկյանին հաջողվել է կերտել հոգեբանական կերպարներ՝ պատկերելով նրանց ներաշխարհը, զգացական դաշտը, խորը վիշտը, ապրումները և անձնական ողբերգությունները: Պատմական թեմաներով գրված պատմվածքների համար Գ. Դևրիկյանը բնաբան է ընտրում միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններում տարածված «Ձեռս մաշի, դառնա ի Հող, Գիրս մնա հիշատակող» արտահայտությունը, որը նաև Դ. Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց» պատմական վիպակի բնաբանն է: Գ. Դևրիկյանը պատմվածքների նյութ է դարձնում հիշատակությունները, միջնադարյան հին ձեռագրերը, եկեղեցիների ու տապանաքարերի արձանագրություններ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ  
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

1. **Երկանյան Ա.**, «Հայ միջնադարյան քնարերգության արտացոլումը Գևորգ Դերիկյանի արձակում», Էջմիածին, փետրվար, Բ, 2009, էջ 160-167:
2. **Երկանյան Ա.**, «Արարող ու կառուցող հայը Գևորգ Դերիկյանի «Տրդատ ճարտարապետ» վեպում», Հայագիտական հանդես, Երևան, N 3 (14), 2010, էջ 106-111:
3. **Երկանյան Ա.**, «Պանդխտության թեմայի արտացոլումը Գևորգ Դերիկյանի «Վիրավոր կռունկ» վեպում», ԲՊՀ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 87-96:
4. **Երկանյան Ա.**, «Գևորգ Դերիկյանի «Գոյամարտ» վեպը», Արցախի պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, Պրակ, 1/2017, էջ 205-209:
5. **Երկանյան Ա.**, «Գևորգ Դերիկյանի «Սրբացած հուշարձան» աշխատության պատմագեղարվեստական արժեքը», Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, 2018, էջ 315-319:
6. **Երկանյան Ա.**, «Գևորգ Դերիկյանի «Տրդատ ճարտարապետ» վեպի ուսուցողական պատգամները», Մանկավարժական միտք, 4 (71), Երևան, 2018, էջ 88-92:
7. **Երկանյան Ա.**, «Միջնադարյան գրիչ-ճաղկողները Գ. Դերիկյանի ստեղծագործություններում», Կանթեղ, Գիտական հոդվածներ, 4 (77), Երևան, 2018, էջ 33-41:

## Ерканян Анна Еремовна Творчество Геворга Девриkyяна

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02-«Армянская литература новейшего периода».

Защита диссертации состоится 15 июля 2022 года, в 12:30 на заседании специализированного совета ВАК 003 по специальности «Литературоведение» при Институте литературы имени М. Абегяна НАН РА (по адресу: Ереван, ул. Григора Лусаворича 15).

### РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена общему анализу произведений писателя-публициста второй половины 20-ого века Геворга Девриkyяна. Произведения Г.Девриkyяна посвящены армянской истории и известным деятелям армянской культуры, армянскому фольклору и средневековой литературе. В них поднимаются актуальные проблемы. Каждый фрагмент его произведений пронизан патриотизмом, любовью к отечеству, а тематика произведений отличается актуальностью, проведением параллелей между прошлым и настоящим и обеспокоенностью современными реалиями.

Несмотря на то, что о литературном наследии и общественной жизни Геворга Девриkyяна написаны десятки статей, разбросанных в прессе своего времени, а также в сборниках критических статей, до сих пор нет научно-теоретического труда, посвященного всестороннему исследованию его произведений. Диссертация **“Творчество Геворга Девриkyяна”** призвана восполнить данный пробел в армянской литературе. Данная диссертационная работа состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

**В первой главе**, названной **“Аниада Геворга Девриkyяна”**, нами проведен анализ посвященных Ани исторических романов **“Зодчий Трдат”** и **“Борьба за существование”**, хотя в хронологическом плане им предшествует роман **“Раненый журавль”**. Мы поступили так, чтобы сохранить хронологическую канву, обратившись сначала к произведению, повествующему о событиях 10-11 веков, а затем –к роману **“Раненый журавль”**, представляющему освободительную борьбу 17-18 веков. Кроме общепринятого анализа и представления исторических обстоятельств указанного времени, нами изучены также первоисточники, на которые опирался Г.Девриkyян, проведен их доскональный анализ. Перед нами стояла задача–показать, как интерпретировались соответствующие отрывки исторических трудов, какое художественное воплощение они нашли в указанных двух произведениях Девриkyяна, каким образом они стали основой для презентации общей картины данной эпохи.

Вторая глава посвящена произведениям, представляющим переходный период в армянской истории. Это роман “Раненый журавль”, где раненый журавль является символом армян, лишенных своей исторической родины и странствующих по чужбине, и труд “Священный памятник”. Мотив странствий, переезд главного героя из одной страны в другую придает роману характерные черты путевых заметок. В романе представлена армянская среда как в родной стране, так и в армянских колониях. Нами также представлены деврикановские подходы к символическому образу журавля и его восприятие последнего, а также собирательный образ странствующего вдали от родной земли армянина Артына. **Во второй главе** продемонстрирована историческая и художественная ценность произведения “Священный памятник”. В книге представлен ретроспективный взгляд на армяно-российские литературные связи позднего средневековья. И в этой, и в предыдущей главах проведен сравнительный анализ исторических первоисточников и их использования в художественной литературе, создание исторического колорита в этнографических, религиозных и фольклорных произведениях своего времени.

**В третьей главе**, названной “Малая проза Геворга Девриkyяна”, нами проанализированы произведения малых жанров Г. Девриkyяна – рассказы. В параграфе “**Рассказы на исторические темы**” проведен анализ ряда рассказов, написанных по средневековым мотивам, а также рассказов, поднимающих актуальные проблемы. Жития святых, библейские истории раннего и позднего средневековья также послужили основой для сюжетов рассказов Г. Девриkyяна. В третьей главе продемонстрированы сходства, которые можно обнаружить в рассказах на исторические темы Д. Демирчяна, В. Хечумяна и Г. Девриkyяна. В параграфе “**Средневековые писцы-иллюстраторы в произведениях Геворга Девриkyяна**” нами предпринята попытка представить художественное воплощение последних как в рассказах, так и романах и публицистических трудах Девриkyяна.

В заключении представлены результаты исследования и обобщения. В конце диссертационного исследования приводится список использованной литературы, который отражает использованную теоретическую литературу и источники проанализированного нами фактического материала. В ходе исследования были использованы системный, аналитический, сравнительный методы.

Представление Г. Девриkyяна как творца помогает выявить пройденный им творческий путь, а также метод и изобразительные средства, использованные писателем для создания образов литературных произведений. Целью данного диссертационного исследования являлось представление произведений Геворга Девриkyяна, выявление особенностей его прозы, демонстрация научно-художественной взаимосвязи и взаимодополнения произведений писателя

Anna Yerem Yerkanyan  
The Creative Work of Gevorg Devrikyan

The abstract of the thesis for the scientific degree of the Candidate of Philology in the speciality 10.01.02 “The modern era of Armenian literature”.

The defence is going to be held on July 15, 2022, 12:30 p.m. at a specialized council 003 of Higher Attestation Commission acting at the institute of Literature after M. Abeghyan. Address: Grigor Lusavorich 15, Yerevan.

SUMMARY

The present thesis is dedicated to the general examination of the works of Gevorg Devrikyan, a writer-publicist of the second half of the 20th century. G. Devrikyan's works are dedicated to the Armenian history and the prominent figures of the Armenian culture, the Armenian folklore and medieval literature, they also raise the current issues and various problems. Every episode of his work is imbued with patriotism, and the theme is modernity, in parallel with the presence of the history of the past and with the concerns of nowadays life.

Though dozens of articles have been written about Gevorg Devrikyan's literary heritage and public activities, which are scattered in the press of the time, as well as in the collections of articles of literary critics, there is still no any scientific-theoretical work fully examining his works. The present thesis entitled "The Creative Work of Gevorg Devrikyan" fills the gap of the examination-complete analysis of the creative work of Gevorg Devrikyan in the Armenian literature.

The present thesis consists of an Introduction, three Chapters, Conclusions, and a List of Used Literature.

The first chapter is entitled "Gevorg Devrikyan's Anian", by analyzing the historical novels "Trdat the Architect" and "Struggle for Existence" dedicated to Ani, though they are chronologically preceded by the novel "The Wounded Crane". This was done in order to keep the chronological process of the themes of the works, first to refer to the works of the 10th-11th centuries, and then to "The Wounded Crane", which presents the liberation uprisings of the new 17th-18th centuries.

In addition to revealing the historical environment and accepted analysis of the two historical novels, we also referred to the historical sources used by G. Devrikyan and their analysis. We have put forward a task to show how the relevant passages have been interpreted in the works of historians, how they have been reflected artistically, and how the basis for the reflection of the general picture of the given era have become mentioned in the two historical novels.

Since a lot of place has been given to Ani in the novel and in general to architectural monuments, besides the historical analysis we have also examined the

artistic imagination of the constructive art, Devrikan's interpretations of various issues of the Armenian architecture.

The second chapter has been dedicated to the works dedicated to the transitional period of the Armenian history, to the novel "The Wounded Crane", where the wounded crane symbolically depicts the Armenian wanderers separated from their native nature in foreign lands, and the work "Sacred Monument". The theme of wandering and protagonist's passage from one country to another has also given the novel a guiding character, through which the whole Armenian reality and the environment of the time has been presented starting from the country itself up to the Armenian colonies.

With the substantiated interpretations, we have disclosed Devrikan's approaches and perceptions to the symbolic image of the crane, as well as the collective image of Artin, an Armenian wanderer wandering in the foreign lands.

In the second chapter, we also referred to the work "Sanctified Monument", presenting the latter's historical and artistic value. The book takes a look back to the medieval Armenian-Russian literary ties. In both this and previous chapters, we have compared historical sources and their artistic representation, the creation of a historical environment with the reproduction of ethnographic, religious, and folklore works of the time.

The third chapter is entitled "Gevorg Devrikyan's Little Prose", where we have examined the works of G. Devrikyan's small canvas, the stories. In the sub-chapter entitled "Stories on Historical Themes" we have analyzed a number of stories based on the medieval testimonies, as well as the stories related to the current issues. The biblical stories of the martyrological, medieval, ancient and new periods have also become the subject of Gevorg Devrikyan's stories. The third chapter shows the commonality in the stories written on historical topics that exists between D. Demirchyan, V. Khechumyan and G. Devrikyan. In the subchapter entitled "Medieval Writers-Flourishers in Gevorg Devrikyan's works" we have tried to present the artistic depiction of writers-flourishers both in short stories and in the historical novels and publicist works.

The Conclusion summarizes the results and conclusions of the study.

A list of literature is presented at the end of the work, which reflects the used theoretical literature and the sources of the analyzed factual material. During the study we have used systemic, analytical and comparative methods.

Introducing G. Devrikyan as a creator helps to reveal his creative path and method, the means of image formation of a literary work.

The aim of the present thesis was to present Gevorg Derikyan's creative work, to reveal the peculiarities of the prose, to show the scientific-artistic interconnection and complementarity of the latter's works.

